«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հայրենիքի կերպարը Թումանյանի բանաստեղծություններում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՀԵՂԻՆԱԿ Դանիելյան Տաթևիկ

ՄԱՐԶ Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վաղարշապատի «Ներսիսյան» թիվ 6 հիմն. դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2
ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ 4
ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ_ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 6
ԳԼՈՒԽ 1 6
1.1 «Հայոց լեռներում» 8
1.2 «Հայոց վիշտը» 10
1.3 «Հայրենիքիս հետ» 11
1.4 «Հոգեհանգիստ» 13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 35
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նրա կախարդական գրիչը ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշքը լինի առակ թե քառյակ, հեքիաթ թե պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն

Կովկասյան ժողովուրդների եղբայրացման ջատագովներից ամենից մեծը եղավ նա իր հզոր խոսքով և օրինակով: Եվ որպես այդպիսին, անմոռանալի պիտի մնա նրա հոյակապ պատկերը:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Հմայիչ էր Հովհաննես Թումանյանը որպես բանաստեղծ ու մարդ: Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը-գրականության մեջ սեր դեպի ժողովրդական ստեղծագործությունը, իսկ կյանքում լայն հյուրասիրություն և սեր դեպի իր ընտանիքն ուերեխաները:

...Այժմ, նոր կյանքի կերտման այս դարաշրջանում, անցյալի ֆոնի վրա մեծ բանաստեղծի կերպարանքն ավելի ու ավելի է ցայտուն ելնում որպես փայլող գագաթ

Մ. ՍԱՐՅԱՆ

Թումանյանը բազում թելերով անխզելիորեն կապված էր իր ժողովրդի հետ։Իր ողջ կյանքում, բովանդակ ստեղծագործությամբ նա շնչել ու ապրել է ժողովրդի հետ, խնդացել նրա ուրախություններով, ցավել նրա վշտերով, ոգեշնչվել նրա ապագայով:

Ժողովրդի հետ նա անդադար ելք էր որոնում բռնության ու շահագործման կապանքներից ազատվելու, և հաճախ դժվար է որոշել, թե որտեղ է ավարտվում ժողովրդական ոգու թռիչքը և որտեղ է սկսվում բանաստեղծը: Թումանյանը հայ ժողովուրդն էր բանաստեղծության մեջ, ժողովուրդը՝ իր ճշմարիտ կերպարանքով, մտքերով, երազանքներով. «Բանաստեղծի անմնացորդ սերը ժողովրդի հանդեպ միաժամանակ ապրող ատելություն էր օտար նվաճողներիհանդեպ:

Թումանյան- հայրենիք՝ միասնական ու անբաժան: Բանաստեղծի երգերը

կենդանի են, հնչում են հայրենիքի թախծոտ ներշնչումով և այդ հայրենի թախիծն

է, որ թև է տալիս ու բարձրացնում գրողին, նրան դարձնում ժողովրդային ու ազգային: Ասվածը հաստատում է սեփական խոսքով. «Ամենից առաջ ամեն բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պիտ լինի»:

Թումանյանը գրում է.

Չար բախտը ինձ ներքև բերավ

Բարձրը Գուգարքի ծաղկոտ սարերից,

Իմ հոգին լըցրեց հառաչանք ու ցավ,

Տըխուր երգերի քընար տըվավ ինձ:

Հայրենիքը Թումանյանը պատկերում է խոր ու բազմակողմանի և ստեղծում է հայրենիքի երգը հարուստ երանգներով, ազգային ու համամարդկային նոր առնչություններով: Պատմական հանգամանքներն էլ անսպառ նյութ էին տալիս ազգային բանաստեղծին՝ թափանցելու խորքերը և մոտենալու համամարդկային խնդիրներին ,և նրա գործունեությունը դուրս էր գալիս գրական աշխատանքների սահմաններից: Բանաստեղծն այրվում էր ժողովրդի ճակատագրով, շրջում էր, ուսումնասիրում ժողովրդի բարքերն ու վիճակը:

Հայրենասիրության թումանյանական այս բանաձևումը որքան հստակ է, նույնքան էլ դիպուկ է և անխոցելի. հայրենիքը, ուրեմն, պետք է սիրել ոչ միայն զգացմունքով (սրտով), այլև խորապես ճանաչելով ու հասկանալով նրան (բանականությամբ): Թումանյանն էր, որ առաջին անգամ իր ողջ խորությամբ գրականություն բերեց հայրենասիրության այս որակը, նա էր, որ հայրենիքի գեղարվեստական պատկերի իր որոնումներում զգացմունքային հայրենասերի կողքին դրեց գիտակից հայրենասերին, որը հայրենիքը սիրում է ոչ թե հախուռն, ռոմանտիկ, չհասկացված սիրով, այլ՝ խորամուխ լինելով նրա էության մեջ, ըստ ամենայնի ըմբռնելով, թե՝ «ինչ ենք սիրում և ինչու»:

Թումանյանի տագնապները խոր արմատներ ունեին: Դարձյալ դիմենք իրեն. «Չգիտենք՝ ինչի հավատանք, ինչ սիրենք, ինչ ցանկանանք – տարուբերվում ենք մի մեծ վարանքի մեջ, բարոյական մի անեզր ալեկոծության մեջ, նավահանգիստ չենք հասնում, փարոս չենք տեսնում, և մեր բոլոր մխիթարությունն այն է, որ ազնիվ են մեր տանջանքները»:

ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դարեր շարունակ հայրենասիրական թեմայով շատ երկեր են գրվել, բայց Թումանյանի գործերը իրենց խոր գաղափարական իմաստով և թե բարձր արվեստով մինչև այժմ էլ դեռ մնում են անգերազանցելի: Հ. Թումանյանի բոլոր ստեղծագործությունների գաղափարական հիմքն ամբողջովին տոգորված է հայրենասիրությամբ, մարդասիրությամբ, ժողովուրդների բարեկամության, խաղաղ կյանքի ու ազատ աշխատանքի երազանքով: Հ. Թումանյանի՝ հայրենասիրական թեմայով գրված ստեղծագործությունների ուսուցման նպատակն է աշակերտների գաղափարական ու գեղագիտական դաստիարակումը, նրանց մեջ հայրենիքի, նրա ժողովրդի, լեզվի ու խոսքի նկատմամբ սեր դաստիարակելը: Ե՛վ երեկվա, և՛ այսօրվա աշակերտը, հայրենասիրական ոգով ներշնչված, կմարմնավորի մեր երկրի բարձր գաղափարայնությունը և մարդասիրությունը ու կդառնա համաժողովրդականի, համամարդկայինի բարձրագույն աստիճանը: Հ. Թումանյանի՝ հայրենիքին նվիրված ստեղծագործությունների ուսուցումը դպրոցում կատարվում է տարբեր փուլերով, յուրաքանչյուր փուլում անցում է կատարվում դասարանից դասարան: Հայրենասիրական ստեղծագործությունների ուսուցման ժամանակ կարևորվում է կենդանի խոսքը՝ գեղեցիկ ասմունքը, ընթերցումը: Հայրենասիրությունը Թումանյանի բանաստեղծական հանճարի ամենաբարձր արտահայտություններից մեկն է, որը կենտրոնական տեղ է գրավում նրա ստեղծագործական համակարգում: Թումանյանի հայրենասիրական թեման բացատրելու ժամանակ պետք է նշել, որ նա իր բոլոր հայրենասիրական բանաստեղծություններում բացում է իր հույզերը,պատմում իր հոգու անդիմադրելի ձգտման մասին՝ վերադառնալ հայրենի չքնաղ երկրի գիրկը:

Բարձր դասարաններում Թումանյանի հայրենասիրական բանաստեղծություններն

ուսուցանելիս պետք է զուգահեռներ անցկացնել նախորդ դարաշրջանի սերնդի, որին ներկայացնում է Թումանյանը ,և այսօրվա հայրենիքի համար մարտնչող և զոհվող հերոսական սերնդի միջև: Հայրենասիրական թեման ամփոփելու ժամանակ ուսուցիչը անպայման անդրադառնում է Թումանյանի ծավալած հայրենասիրական

գործունեությանը և նշում, որ թումանյանագիտության ամենից քիչ ուսումնասիրված

բնագավառը գրողի հասարակական գործունեության բնագավառն է: Մշտապես լինելով ծավալվող իրադարձությունների կենտրոնում՝ ամենայն հայոց բանաստեղծը աշխատում էր թեթևացնել հայոց ծանր վիշտը: Նա այդ ամենն անում էր մարդկային խղճի ու քաղաքացիական պարտքի գիտակցությամբ:

Օգտագործելով «դերային խաղ» մեթոդը՝ երեխաները ասմունքով կներկայացնեն Հայաստանը և հայ ժողովուրդը բանաստեղծություններում ու երգերում: Միաժամանակ աշակերտներին կառաջադրվեն իրենց անցած շատ հայտնի բանաստեղծություններից հատվածներ, որպեսզի գուշակեն՝ ով է հեղինակը կամ որ բանաստեղծությունից է հատվածը: Կկիրառենք նաև «քառաբաժան» մեթոդական հնարը,որը հիմնականում անհատական գրավոր աշխատանքի ձև է:Նման մեթոդները ակտիվացնող են և հարմար հատկապես բարձր դասարանցիների համար:Հայրենասիրական դաստիարակության շարունակականությունը ապահովելու նպատակով կարելի է աշակերտներին առաջարկել ներկայացնել իրենց երազած «Ապագայի Հայաստանը»: Այսպիսով՝ համեմատելու, վերլուծելու շնորհիվ աշակերտը մասնակից է դառնում թեմայի ուսուցմանը, մտովի տեղափոխվում է թումանյանական ժամանակաշրջան, սեր է արթնանում բնության, հայրենի երկրի ու ժողովրդի նկատմամբ և գիտելիքը դառնում է ավելի հիմնավոր:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՊԱՐԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 1

Թումանյանի ողջ ստեղծագործությունը՝ չափածո թե արձակ, ներծծված է մարդասիրության, ժողովրդասիրության և հայրենասիրության բարձր գաղափարներով:Ապրելով մեր ժոզովրդի պատմության ամենադրամատիկ շրջանում՝ նա խոստովանել է.«Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի ճակատագիրը,սրա պատմությունը,էն սոսկալի դրաման,որ կոչվում է հայոց պատմություն,ու էնտեղից է բխում նրա գործերի վրա եղած իմ հայացքն ու մտածմունքը…» :Ապա շարունակում է.«Ո՞րն է էս ժողովրդի պատմական ճակատագիրը,նրա գոյության խորհուրդը,ի՞նչ է կամենում սա, սրա ոգին»: Միայն այսպես կարող էր խոսել ազգային բանաստեղծը,քանզի այդ տարիներին անելանելի ծանր դրության մեջ էր հայտնվել պետականությունից զրկված հայ ժողովուրդը:Ո՛չ եկեղեցու ,ո՛չ ազգային կուսակցությունների ճիգերը,ո՛չ էլ ռուս ու եվրոպական «գթասիրտ» տերությունների հետ կապված հույսերը,ինչպես միշտ,ոչինչ չտվեցին դարերի խորքից եկած,հարուստ մշակույթ ստեղծած մեր ժողովրդին:

Թումանյանն էր, ահա, որ ավելի խորությամբ, քան իր նախորդներից որևէ մեկը, տեսավ ու հասկացավ նավաբեկվող ժողովրդի իրական կացությունը և ամենակարևորը՝ խոսեց այդ մասին ճշմարտությամբ: Բայց Թումանյանը Թումանյան չէր լինի, եթե միայն խոսեր: Եվ նա կատարեց այն առաքելությունը, որը ճակատագրով վերապահված էր իրեն. նախորդ շրջանի հայ բանաստեղծությունը ողողած «գալոց օրերի հրճվանքի», «քնարի երջանիկ ձայների» փոխարեն գրականություն բերեց գալիք օրերի տանջալից հարցը՝ ինչպե՞ս հասնել նավահանգիստ, որտե՞ղ տեսնել փրկության փարոսը:

Թումանյանը Թումանյան չէր լինի, եթե չունենար այդ տանջալից հարցի պատասխանը՝ հայի փրկությունը հայ ոգու մեջ է: Նա էր, որ ավելի իրատեսորեն, ավելի շոշափելիորեն, քան իր նախորդներից որևէ մեկը, ըմբռնեց և գրականություն բերեց այդ ոգին: Ասում էր. «Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՝ դու կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ի՞նչ ես անելու: Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ քարից էլ կարող է Աբրահամու զավակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդ»: Թումանյանի ստեղծագործությունն է, ահա, որ, շնչելով ու ապրելով ազգային ոգով, դարձավ մեր ժողովրդի պատկառելի խոսքը, և այդտեղ է, որ Թումանյանն իր ողջ հասակով հառնում է որպես մեր ամենաազգային, ամենաժողովրդական բանաստեղծը: Այդտեղ է, որ նա դառնում է Ամենայն հայոց բանաստեղծ՝ իր եզակիության, անկրկնելիության և անզուգականության ամենախոր կնիքը, առհավատչյան:

Թումանյանը բացառիկ գրող է , ում արվեստում իր փայլուն արտացոլումն է գտել հայ ազգի ոգին՝ իր բոլոր դրսևորումներով ու արտահայտումներով: Մեծերի և փոքրերի համար հավասարապես սիրելի և ամենից ավելի անզուգական բանաստեղծը դարձավ նաև հայ ժողովրդի պատմության կենսագիրը:

Նրա համար գերագույնը Հայրենիքն էր ու այն մեծ սերը , որ տածում էր հարազատ ժողովրդի հանդեպ: Ահա թումանյանական հանճարեղ թևավոր խոսքերից մեկը. «Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա՝ իր ճամփան անմոլոր գնալու համար»:

1.1 «Հայոց լեռներում»

«. . . Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում . . . », «. . . Թե երբ կըբացվի պայծառ առավոտ հայոց լեռներում. . . »: Խորիմաստ են, գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ պարզ ու հասարակ Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները: Դրանք լի են հայրենասիրական, փիլիսոփայական, խոհական մտքերով: Բանաստեղծը, իր «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ» բանաստեղծություններում արտացոլել է հայ ժողովրդի վիշտը, դարավոր պատմությունը և հույսն ու կարոտը դեպի վաղվա պայծառ առավոտը: «Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ հեղինակը մեր դարերով անցած ուղին, մեր հայրենիքի ու հայ ժողովրդի պատմությունը նկարագրել է ինչպես անապատի միջով անցնող մի քարավան, որը շարունակում է իր ճանապարհը դեպի վեր, թե ինչպես է դարերի ընթացքում թշնամիների, քոչվոր ցեղերի արշավանքների և հարձակումների պատճառով թալանվել ու զարկվել մեր հայրենիքը հայոց լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի
Օրդուները սև
Իրարու ետև
Եկա՜ն, զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Սակայն, չնայած այդ ամենին, քարավանը սոսկահար ու թալանված շարունակում է իր ճանապարհը՝ «…տանելով իրեն վերքերն անհամար»: Իսկ մեր աչքերը կարոտով նայում են աստղերին ու սպասում այս մութ գիշերից հետո բացվող պայծառ առավոտին: Լեռները բարձր են, արնոտ ու սուգի: Սակայն ճանապարհի ընթացքում սպասվում է կանաչ, սպասվում է ծաղկունք:«Հայոց լեռներում» բանաստեղծության մեջ, խոսելով հայ ժողովրդի դարավոր պատմության, մաքառումների և տանջալից ուղու

մասին, հավատով է պատկերել հայրենիքի անպարտելի ու ստեղծագործ ոգին.

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝

Հեռու աստղերին,

Երկրնքի ծերին,

Թե ե՞րբ կրբացվի պայծառ առավոտ՝

Հայոց լեռներում,

Կանաչ լեռներում:

1.2 «Հայոց վիշտը»

«Հայոց վիշտը» բանաստեղծության մեջ անհանգիստ է բանաստեղծի հոգին,բանաստեղծության միջոցով Թումանյանը նկարագրում է Հայոց անասելի վշտի չափը: Այն անհուն ու խավար մի ծով է, որում լող է տալիս հեղինակի հոգին: Սակայն, իմ կարծիքով, յուրաքանչյուրի ոք, ով հասկանում է՝ ինչ է հայրենիքը և հայոց վիշտը, լողում է այդ ծովում.

Հայոց վիշտը՝
Անհուն մի ծով,
Խավար մի ծով ահագին,
Էն սև ծովում տառապելով,
Լող է տալիս իմ հոգին:

Եվ որքան էլ բանաստեղծի զայրացկոտ հոգին ծառս է լինում մինչև երկինք, միևնույնն է շարունակում է տառապել:Եվ այդ տառապանքն այնքան մեծ է, որ հեղինակի հոգին ոչ հասնում է երկնքին և ոչ էլ գտնում հատակը ծովի:

Ոչ հատակն է գտնում անվերջ
Ու ոչ հասնում երկնքին...
Հայոց վշտի մեծ ծովի մեջ
Տառապում է իմ հոգին:

Թումանյանը, լինելով մեծագույն հայ, ամբողջովին ապրեց և գործեց հայկականության մեջ՝ այս հասկացության ամենալայն իմաստով, և բնավ սխալ չի լինի ասել, որ նա այն եզակիներից էր, որոնք իրենց էության մեջ առավելագույնս են կրում հայկականության հատկանիշները՝ մարմնավորելով հայ ազգի ոգին և խիղճը:

1.3 «Հայրենիքիս հետ»

«Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը Թումանյանը գրել է 1902 թվականին, նրա յուրաքանչյուր տունը մեր պատմության ու գոյափիլիսոփայության յուրօրինակ խտացում է: Առաջին երկու քառատողերում «Զարկված ու զրկված, ողբի ու որբի հայրենիքի» պատկերներն են, իսկ երրորդը և չորրորդն ավարտվում են «Լույսի և հույսի, նոր ու հզոր հայրենիք» արտահայտություններով:

Զրկված ու զարկված, որբի ու ողբի իմ հայրենիք. . . Զրկված ու որբ, քանի որ զավակները գաղթում են՝ ժողովուրդը լքում է իր հայրենիքը, զարկված ու ողբի,քանի որ բանակներն անհամար ջարդում են, ավերում ՝ դարձնելով սև ու սուգի մի հովիտ:

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,

Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից

Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանդուրեք,

Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,

Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,

Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերև...

Այս բանաստեղծությունը նույնպես մեծ բանաստեղծը ավարտում է հույսով: Հին ու նոր վերքերով մինչ այսօր կանգնած՝ նա՝ Հայրենիքը, խոսք է խոսում Աստծո հետ: Ժողովուրդը սպասում է, որ կգա արշալույսը նոր կյանքի: Իսկ Հայրենիքի նոր կյանքը, նոր երգերով ու խոսքով պետք է գովեն միայն այն պոետները, որոնք չեն պղծել իրենց շուրթերն անեծքով:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,

Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,

Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,

Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,

Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,

Հըզո՛ր հայրենիք. . .

1.4 «Հոգեհանգիստ»

1915 թվականին՝ Մեծ եղեռնից հետո, Թումանյանը գրում է «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը։ Ծանր մղձավանջի մեջ հայտնված իր ժողովրդի մասին այսպես է գրում մեծ բանաստեղծը.

«Նորից կոտորածի մռայլ մղձավանջը ծանրանում է մեր հոգնած սրտերին, նորից ամենուրեք դալկանում է Արևելքի հին տառապյալը- հայ ժողովուրդը»:

Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով

Մարած են, մեռած, փլռված ու ցրված հազար հազարով...

Այս է հայոց կյանքի իրականությունը,այստեղ է,որ ժամանակաշրջանի պահանջները անխուսափելիորեն ծանրանում են բանաստեղծի ուսերին : Ուստի ազգի ճակատագրով ապրող գրողը չէր կարող շեղվել իրականության պահանջներից.

« Այդպես է ժամանակը,այդպես է ժամանակի կնիքը,և այս մի այնպիսի մեծ հանգամանք է,և սրա ուժը և իշխանությունը այնքան մեծ են ու զորեղ,որ ոչ մի հանճար չի կարող նրան արհամարհել, անտես առնել նրա հաշիվները: Այդ անկարելի է, այդ կնշանակի չապրել այն ժամանակներում կամ ուղղակի չապրել:Իսկ ապրող կենդանի մարդու,ևս առավել բանաստեղծի վրա նա ազդում է, հազար կողմից արտացոլվում նրա հոգում յուր առանձնահատուկ երևույթներով և արտահայտություն է գտնում նրա ստեղծագործությունների մեջ»:

Ահա թե ինչու բանաստեղծը հոգեհանգիստ է կարդում իր ժողովրդի անթիվ անբախտ զոհերին:

«. . . — Հանգե՛ք, իմ որբեր… իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ… Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էսպես կըմնա…»

Հոգեհանգստի ժամանակ ողջերը ննջեցյալի հոգու համար աղոթում են և Աստծուց հայցում ողորմություն։ Այդպես էլ «Հոգեհանգիստ» բանաստեղծության մեջ

հեղինակը անբախտ զոհերին կարդում է վերջին հանգիստը։ Հայոց զոհերն անհամարեն, հենց այդ պատճառով էլ հեղինակը մոմերի փոխարեն հայոց հրդեհի կարմիր բոցերից է վառում Հայոց աշխարհի լեռները.

Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,

Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից

Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանդուրեք,

Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,

Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,

Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերև...

Կանչելով հոգիներին, որոնք ցրված էին մինչև Միջագետք, Ասորիք, մինչև Ծովն հայոց՝ հեղինակը կարծես մխիթարում է, հորդորում թողնել հուզմունքը, քանի որ «Մարդակեր գազան՝ մարդը դեռ երկար էսպես կըմնա…»։ Եվ զոհերի հոգիները, Սաղմոս կարդալով, գնում են հանգչելու. . .

Բանաստեղծության մեջ մերժվում է այն, ինչ ցածր է ,ստոր և անմարդկային:Ողբերգականը նաև այն է, որ համընդհանուր ոճիրը կանխելու համար հազարամյակների միջով անցած մարդը ի վիճակի չէր փրկել ինքն իրեն և ուրիշներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքի կերպարի բացահայտումը Թումանյանի բանաստեղծությունների միջոցով հերթական հրաշալի հնարավորությունն էր լողալու մեծն բանաստեղծի ստեղծագործական օվկիանում:Թումանյանագիտության բազմաշերտ պահոցից փորձեցինք փնտրել,գտնել ու ամբողջացնել Թումանյան-հայրենասերի անգերազանցելի նկարագիրը:Նյութի համակողմանի ուսուցումը հնարավորություն տվեց՝

- բարձրացնել աշակերտների հայրենասիրական ոգին
- բացահայտել սեփական ժողովրդի դժվարին ճակատագիրը
- հավատ ձևավորել սեփական ժողովրդի ապագայի նկատմամբ
- անմնացորդ սիրել հայրենիքը

Թեմայի ոսուցման գործընթացում «քառաբաժան» և «դերային խաղ» մեթոդների կիրառությունը

- նպաստեց թեմայի յուրացմանը
- ակտիվացրեց ուսուցման գործընթացը
- նպաստեց սովորողների ինքնուրույն մտածելու և վերլուծելու
- կարողությունների ձևավորմանը
- նպաստեց խոսքի և արտահայտչականության զարգացմանը

Այսպիսով, հաշվի առնելով ուսումնական գործընթացում թեմայի նպատակները, խնդիրներն ու կիրառված մեթոդները, համակողմանի վերլուծության արդյունքում մեր կատարած աշխատանքը կարող ենք համարել բավարար ու արդյունավետ:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Զ.ԱՎԵՏԻՍՅԱՆ «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 11»

2. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ»

3. ԱՐՄԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ «ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԳՐՈՂՆԵՐ»